Սաակ Տարոնցի

ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԲՐՈՆԶԵ ԳՈՏԻՆԵՐԻ ԶԱՐԴԱՄՈՏԻՎՆԵՐԸ

Բանալի բառեր – Ուրարտու, բրոնզե գոտիներ, զարդամոտիվներ, սիմվոլիկ իմաստաբանություն, հարդարանքային տարրեր, դիցաբանական կոնտեքստ, կրոնական-ծիսական աշխարհայացք, էսթետիկ-գեղարվեստական հատկանիշներ, պատկերային-թեմատիկ արտացոլումներ, իմաստային-գաղափարային սկզբունքներ:

Ուրարտական բրոնզե գոտիները որպես բարձր գեղարվեստական արժեք ունեցող հնամյա իրեր մինչ այժմ ոչ միայն զարմացնում են իրենց արվեստաբանական լուծումներով, քանակային համալրվածությամբ, տեսակային բազմազանությամբ և զարդանախշային մոտիվների շքեղությամբ, այլ նաև մատուցում են ուրույն, ինքնատիպ, կրկնակը չունեցող պատկերային արտացոլումներ, որ ներկայացնում են գեղարվեստական բարձր արժեք: Լինելով ուրարտական քաղաքակրթության անքակտելի մասը՝ դրանք ստեղծում էին հարստության, փառահեղության և հզորության ներազդող տպավորություն[1]: Ուրարտական բրոնզե գոտիների գեղարվեստական բարձր որակը և դրանց ծածկույթի բացառիկ պատկերագրությունը ամենաճանաչված են ու առավել հաճախակի տպագրվողը ուրարտական իրերի շարքում[2]: Այդ իսկ պատճառով ուրարտական բրոնզե գոտիները համարվում են չափազանց արժեքավոր պատմա-հնագիտական գտածոներ և կարևոր աղբյուրներ ուրարտական պատմության ու մշակույթի ուսումնասիրման գործում[3]: Դրանց զարդանախշային ուրույն լուծումներում զարմանահրաշ կերպով արտացոլվում են հին Ուրարտու պետության բնակիչների կրոնածիսական ընկալումների և պաշտամունքային հավատալիքների բարդ, բայց կանոնակարգված համակարգները, որոնց հիմքում ուրարտական կրոնն էր[4]: Ուրարտական կրոնի հիմնահիմքը Ուրարտական տերության ներքո բնակվող բազմաթիվ էթնոսների, ժողովուրդների ու ցեղերի կրոնական պատկերացումներն են, ընկալումները և հայեցակարգերը, որոնք արտահայտվեցին Միհերի դռան Ուրարտական աստվածների ցանկում[5]:

Լինելով աշխարհի ամենազանազան թանգարաններում, պետական կամ մասնավոր հավաքածուներում, պահպանվելով ամբողջությամբ, մասամբ կամ որպես սոսկ բեկորներ՝ Ուրարտական բրոնզե գոտիները անվարանելի կերպով վկայում են

---

[1] Տե՛ս Piotrovskii Boris Borisovitch; Urartu – the Kingdom of Van and its Art; Frederick A. Praeger Inc., Publishers; Evelyn, Adams & Mackay, Ltd.; New York, Washington, 1967, p. 15.

[2] Տե՛ս Kendall Timothy; Urartian Art in Boston: Two Bronze Belts and a Mirror; *Boston Museum Bulletin*, vol. 75, 1977, p. 29.

[3] Տե՛ս Piliposyan Ashot; An Urartian Bronze Belt; Studi Micenei ed Egeo-Anatolici, vol. 37, 1996, p. 123.

[4] Տե՛ս Ավագյան Ինգա; Էրիախի երկրի կրոնը; Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Գիտական աշխատություններ, 2013, № 16, էջ 1:

[5] Տե՛ս Հմայակյան Ս.Գ.; Վանի թագավորության պետական կրոնը; Հայաստանի ԳԱ Հրատարակչություն, Երևան 1990, էջ 84:

Ուրարտական գոտիագործության ակունքների և ավանդությունների մասին, Ուրարտական մշակույթը ներկայացնող անբաժանելի ամբողջության մասին: Ուրարտուի քաղաքակրթության այս հիասքանչ բրոնզե գոտիները ընդարձակ տարածում գտան ոչ միայն բուն Ուրարտական պետության սահմաններում, այլև՝ լայն ճանաչում համայն Մերձավոր Արևելքում[1]:

Ուրարտացիների հավատալիքային արժեքները արտահայտվում էին ուրարտացի վարպետների բրոնզե գոտիների վրա զանազան կրոնական-ծիսական կարևոր տարրերի պատկերմամբ՝ վայրի գազանների, մյութոսաբանական կենդանիների, մարդկային կերպարների և աստվածային արարածների պատկերների ընդգրկմամբ, որոնց մեջ կարևոր տեղն էին գրավում նաև **բուսական և զարդանախշային տարրերը** – Կենաց ծառը, Արեգակնային սկավառակը, աստղակերպ սիմվոլները, սրբազան նշանները, այլազան երկրաչափական մարմիններ և այլն[2]: Ուրարտական բրոնզե գոտիները, այդ պատմա-գեղարվեստական բարձր արժեք ունեցող հնամյա իրերը ունկնդիրների և հետազոտողների ուշադրությունը սևեռում են ոչ միայն դրանց ինքնատիպ տեսքին, այլև, ինչը շատ կարևոր է, բրոնզե գոտիների հորինվածքի **հարդարանքային բաղկացուցիչ տարրերին**, կամ, այլ կերպ ասած, **հորինվածքային բաղադրիչ էլեմենտներին**: Մ. Վան Լունը ուրարտական արվեստին նվիրված իր վերլուծության մեջ հստակ կարծիք է հայտնում այդ բաղկացուցիչ տարրերի մասին՝ պնդելով որ ուրարտական արվեստը ունի իր սեփական, կրկնակին չունեցող ուրվանկարը, որի պատճառով զուտ ուրարտական արտադրության իրերը հնարավոր չէ շփոթել այլ մշակույթներով արտադրված իրերի հետ[3]: Մ. Չահինը Ուրարտական մշակույթի անանախադեպ վերելքը կապում է Ուրարտական պետության հաստատման հետ, որն սփռվելով Փոքր Ասիայի, հյուսիսային Սիրիայի և Միջագետքի տարածքներով՝ հաստատեց իր ռազմական զորությունը և հասավ քաղաքական աննախադեպ զարգացման[4]:

Լինելով համայն Ուրարտական արվեստաբանական դպրոցի արմատական սկզբունքների արտացոլում՝ իր բոլոր գեղարվեստական իրականացումներում ներկայացնում է **կրոնա-ծիսական աշխարհայացքի և ավանդական-մշակույթային կատեգորիաների հստակեցված հայեցակարգեր**: Այդ ուրույն հայեցակարգերը իրենց հանրագումարով կազմում են **մյութոսաբանական կրոնական տարրերի համակարգ**, մի ուրույն կատեգորիաների հանրագումար, որտեղ կարևորագույն դեր է հատկացվում **հարդարանքային բաղկացուցիչ տարրերին** կամ **հորինվածքային բաղադրիչ էլեմենտներին**: Մ. Վան Լունը ուրարտական արվեստին վերաբերող իր գրքում ուրարտական գոտիները նկարագրելիս, նկատում է, որ այդ իրերի վրա առկա պատկերված կրոնական-ծիսական տեսարաններում, կենտրոնադիր և ամենակարևոր նշանակություն ունեցող աստվածային երևակայական արարածների հետ

---

[1] Տե՛ս Curtis John; Urartian Bronze Belts; A Zeitschrift für Assyriologie und Vorderasiatische Archäologie, vol. 86, No 1, 1996, p.118.

[2] Տե՛ս Azarpay Guitty; Urartian Art and Artifacts – A Chronological Study; University of California Press, Berkeley and Los Angeles, 1968, p. 47.

[3] Տե՛ս Loon van Maurits Nanning; Urartian Art – Its Distinctive Traits in the Light of New Excavations; Istanbul, Nederlands Historisch-Archaeologisch Instituut, 1966, preface VII.

[4] Տե՛ս Chahin Mack; The Kingdom of Armenia: A History; Curzon Caucasus Group, Curzon Press, England, 2001, p.148.

մեկտեղ հանդիպում են սրբազան Կենաց ծառի պատկերումները այս խորհրդավոր նշանների և երկրաչափական մարմինների հետ, որոնք, դատելով իրենց կոնտեքստային էությունից, ունեն ընդգծված սիմվոլիկ բնույթ[1]: Պ. Զիմանսկին կարծիք է արտահայտում, որ Ուրարտական պետությունը վերածվել էր կայսերական տիպի տերության, որն, ընդգրկելով իր տարածության մեջ լայնածավալ աշխարհագրական տարածքներ, իր հերթին բնիկ էթնո-մշակույթային տարրերի միջոցով ստեղծել է զուտ ուրարտական կրոն՝ Խալդի գերագույն աստծո գլխավորությամբ[2]: Պ. Զիմասկու կողմից արտահայտած տերմինը, որը բնութագրում է ուրարտական պետությունը որպես **հավաքականություն կամ բաղկացուցիչ տարրերի միավորություն,** ևս հանդիսանում է մի կշռային դիտակետ բուն ուրարտական կուլտուրայի ուսումնասիրման գործում, որտեղ ամբողջական պատմական-մշակութային պատկեր ստանալու համար հավաստի զննողական միջոցը հանդիսանում է **տարրերի ուսումնասիրությունը**: Նա սույն դիտակետը ձևաբանում է՝ Ուրարտու պետությունը բնութագրելով որպես միատարր հոմոգեն մշակույթի բաղկացուցիչ նյութական տարրերի հավաքականություն[3]:

Ուրարտական արվեստի զարդանախշային մոտիվները յուրաքանչուր բրոնզե գոտում արտահայտվում են որպես հստակ համակարգ կազմող կառուցողական տարրեր և, իրենց հերթին, համահունչ ու ներդաշնակ են այլ մակարդակների և ենթամակարդակների տարրական համակարգերի հետ՝ կազմելով գոտու ուրույն ու անկրկնելի պատկերը: Միաժամանակ, իրենց ամբողջության մեջ զուգակցելով հիմնակառույց և արմատական նշանակություն ունեցող սկզբունքները՝ **ա) էսթետիկ-գեղարվեստական, բ) պատկերային-թեմատիկ և գ) իմաստային-գաղափարային:**

Ուրարտական բրոնզե գոտիների տիպաբանական այս գնահատականը արտահայտել է Թ. Շարեն Արևմտյան Հայաստանի (արևելյան Անատոլիայի) հին ժողովուրդների հանդերձանքին և մշակութաբանական հարցերին վերաբերող ատենախոսական աշխատանքի մեջ, որտեղ նա բնութագրում, զանազանում և իրարից առանձնացնում է 9-ից մինչև 7-րդ դար մ.թ.ա. գոյություն ունեցած գոտիների տիպերը՝ Ուրարտական և Փռյուգիական-Իոնական: Ըստ հեղինակի տիպաբանական զննման հիմքում ընկած եզրակացության՝ գոտիների Ուրարտական տիպը տարածված էր արևմտյան և կենտրոնական Փոքր Ասիայում, իսկ Փռյուգիական-Իոնականը՝ արևելյան Փոքր Ասիայում[4]:

Ինչ վերաբերում է բուն Ուրարտական բրոնզե գոտիների կենսական բաղկացուցիչ տարրերի **բուսական և սիմվոլիկ զարդանախշային մոտիվների մակարդակին,** ապա այն անմիջապես հետևում է **երկրաչափական հորինվածքային ու երկրաչափական միավորների և մարմինների տարրերի մակարդակներից** հետո: Սակայն այստեղ, այս յուրահատուկ մակարդակի վրա գոյություն ունի ոչ միայն ստույգ բանա-

[1] Տե՛ս Loon van Maurits Nanning; Urartian Art – Its Distinctive Traits in the Light of New Excavations; Istanbul, Nederlands Historisch-Archaeologisch Instituut, 1966, p.123.

[2] Տե՛ս Zimansky P., "Urartian Material Culture as State Assemblage: An Anomaly in the Archaeology of Empire", BASOR 299-300, 1995, p.104.

[3] Տե՛ս Zimansky P., "Urartian Material Culture as State Assemblage: An Anomaly in the Archaeology of Empire", BASOR 299-300, 1995, p. 103.

[4] Տե՛ս Şare Tuna; Dress and Identity in the arts of Western Anatolia; A Dissertation submitted to the Graduate School-New Brunswick Rutgers, The State University of New Jersey in partial fulfillment of the requirements for the degree of Doctor of Philosophy Graduate Program in Art History written under the direction of Dr. John F. Kenfield III; New Brunswick, New Jersey, May 2011, p. 92.

ձևված և դասակարգված հիերարխիկ շարունակություն, այլև՝ նշանակալից տարբերություն, որը անպայմանորեն պիտի ընդգծվի: Ռ. Մերհավի նկատառումով՝ բացահայտվում է **բուսական և զարդանախշային տարրերի համակարգված բնույթը**, որն Ուրարտական բրոնզե գոտիներում կազմում է մի **յուրահատուկ համակարգ համակարգի մեջ**, կամ էլ, այլ կերպ ասած, մի շատ ուրույն ու կարևոր **ենթահամակարգ**: Ռ. Մերհավը նշում է հետևյալ **բուսական և զարդանախշային տարրերը**. Կենաց ծառը, արմավիկները, ծաղիկները՝ զուգակցված այլ տարրերով միևնույն համակարգի ներքո՝ արև-սկավառակով, խաչերով, օղակ-կլորակներով, աստղակերպ նախշերով և այլ խորհրդանիշներով, կազմավորող համաչափային սիմետրիա և այլ կենդանական, մարդկային, մարդակերպ-անասնային երևակայական էակների և աստվածային արարածների հետ իրենց զուգակցմամբ ու համալրմամբ կազմող տիպիկ ուրարտական թեմատիկ տեսարաններ[1]: **Բուսական և զարդանախշային մոտիվների մակարդակը** յուրահատուկ է այն առումով, որ տարբերվում է նախորդ երկու մակարդակներից արմատական նշանակություն ունեցող հատկանիշներով՝ **էսթետիկ-գեղարվեստական**, **պատկերային-թեմատիկ** և **իմաստային-գաղափարային**: Ուրեմն, հաշվի առնելով վերը բերված գործոնները՝ մենք պիտի առանձնացնենք **բուսական և սիմվոլիկ զարդանախշային մոտիվների մակարդակի հարդարանքային բաղկացուցիչ տարրերի** հետևյալ **որակային կերպերը** կամ **բնութագրային առումները** . **ա) նախշ, բ) զարդ, գ) բույս, դ) նշան, ե) տիեզերական սիմվոլ, զ) սուրբ խորհրդանիշ**, նաև, հետևյալ հիմնակառույց **իմաստային սկզբունքները՝ ա) էսթետիկ-գեղարվեստական, բ) պատկերային-թեմատիկ և գ) իմաստային-գաղափարային**: Դրանց հնարավոր տարբերակներն ընդգրկում են այս կամ այն կամ բոլոր **որակային կերպերի** և **իմաստային սկզբունքների** առկայությունը կամ բացակայությունը: Ուրարտական բրոնզե գոտիների հորինվածքային բնութագրման կապակցությամբ Թ. Կենդալը արտահայտել է այն տեսակետը, որ Ուրարտական գոտիների պատկերային միավորները բաղկացած են անթիվ ու անհամար բաղկացուցիչ տարրերից, որոնք այդ գոտիների թեմատիկ դրսևորումները դարձնում են անկրկնելի՝ թույլ տալով ստեղծել բազում կաղապարային օրինակներ և արարել երևակայության համար զարմանահրաշ նորանոր կերպարանքներ[2]:

Բացի վերը նշված հատկություններից, բրոնզե գոտիների **բուսական և սիմվոլիկ զարդանախշային մոտիվները** ունեն **հորինվածքային** կարևոր **գործառույթներ,** որոնց բուն նպատակն է ապահովել **նկարագրային հարդարումը**, զատել կենդանական, մարդկային, ծիսական, աստվածային կերպարները մեկը մյուսից, ինչպես նաև՝ ապահովել համաչափությունը՝ տեղադրելով այս կամ այն կերպարները աջ ու ձախ կողմերում: Բ. Պիոտրովսկին այն կարծիքն է արտահայտել, որ ուրարտական արվեստը իր բնույթով սկզբունքորեն զարդանախշային է, և զարդանախշային տարրերը, վերցված իրական բուսական աշխարհից, խաղում են կարևոր դեր այլ տարրային

[1] Տե՛ս Merhav Rivka; Belli Oktay; Calmeyer Peter; Kohlmeyer Kay; Ruder Ari; Salvini Mirjo; Seidl Ursula; Wartke Ralf-Bernhard; Zahlhaas Gisela; Kellner Hans-Jörg - Grouping and Dating of Bronze Belts; Urartu – A Metalworking Center in the First Millenium B.C.E., Jerusalem, Israel Museum, 1991, p.147.

[2] Տե՛ս Kendall Timothy; Urartian Art in Boston: Two Bronze Belts and a Mirror; *Boston Museum Bulletin*, vol. 75, 1977, p. 51.

տեսակների հետ[1]: Դրանց թվում նա նշում է **կոկոնները, արմավիկները, վարդակերպ ու ծաղկանման տարրերը, ոճականացված ծառերը (նաև - Կենաց ծառը)՝** փաստելով այդ տարրերը անխախտելի կապը այլ կերպարային տարրերի հետ, կատարվող դիրքային և կառուցվածքային համադրման միջոցով[2]: Պետք է ավելացնել, որ **երկրաչափական գծերի, կետերի և գծավորումների** հետ մեկտեղ՝ **բուսական և սիմվոլիկ զարդանախշային մոտիվները** կարող են զատել կերպարները և տեսարանները շարքերով, ինչպես նաև ընդգծել այդ տարրերի դիրքավորումները զարդանախշային հատուկ ազդեցություններով: Ուրարտական բրոնզե գոտիների **բուսական և սիմվոլիկ զարդանախշային մոտիվների** և այլ բաղկացուցիչ տարրերի ներդաշնակ ու հիերարխիկ բնույթի համադրության օրինակ է բերում Ս. Սալվատորին՝ նկատելով որ գոտիների հորինվածքում առկա է միտում դեպի ֆիգուրների ենթադրական շարժումը ձախից աջ, և որ ծաղկանման նշան-սիմվոլները կազմում են քառակուսիակերպ սահմանային առանձնացում՝ հավանաբար նպատակ ունենալով տարբերել նկարագրված մի տեսարանը մյուսից[3]: Նրա բերած զարդանախշային մոտիվները, բացի կոմպոզիցիոն դրվագները իրարից զատելուց, հիմնական նկարագրային տարրերին կցում են տարբեր նշան-սիմվոլներ, որոնք տարբեր զուգակցություններով տվյալ տարրերի համադրությանը կարող են տալ որոշակի երանգ և վերագրել խորհրդանշային իմաստ[4]: Զարդանախշային նշան-սիմվոլների և ներառյալ այլ տարրերի համամասնության տիպիկ օրինակ է բերում Ա. Փիլիպոսյանը՝ բնութագրելով Թել-Լեյլանի գոտու բաղադրիչ տարրերի քանակական հարաբերակցությունը[5]: Վերլուծելով այդ գոտու վրա պատկերված կենդանիների քանակը՝ նա հաշվում է 144 կենդանի՝ 72 առյուծ և 72 ցուլ, նշելով, որ այդ սրբազան կենդանիների քանակը հավասար է ներկայացված ամեն տեսակի համար: Միաժամանակ Ա. Փիլիպոսյանը հայտնաբերում է, որ վարդազարդերից բաղկացած հատուկ բաղկացուցիչ տարրերը, բաժանիչ սյունյակները հավասարապես բաժանում են կենդանիներին 12 խմբի, ամեն մեկը բաղկացած 12 կենդանիներից (6 առյուծից և 6 ցուլից)[6], դրանով իսկ իրագործելով երեք չափազանց կարևոր գործառույթ Ուրարտական բրոնզե գոտիների տեսարանային հորինվածքում՝ **բաժանիչ, համամասնական և զուգաչափային գործառույթներ**: Բացի դրանից, Ա. Փիլիպոսյանը նկարագրում է տվյալ գոտու **համամասնական և զուգաչափային հատկանիշները**, որտեղ ձախ կողմի կենդանիները ընթանում են ձախից դեպի կենտրոն, իսկ աջ կողմինները՝ աջից դեպի կենտրոն՝ դրանով իսկ ապահովելով գոտու ընդհանուր հորինվածքի վերը նշված գործառույթները՝ **բաժանումը, համամասնական հավասարությունը և համաչափությունը**: Ավելին, շարունակելով իր վերլուծությունը՝ նա այս գոտու քանակական գործառույթների և օրինաչափությունների վերաբերյալ նշում է մի շատ կարևոր և ուշագրավ

---

[1] Տե՛ս Piotrovskii Boris Borisovitch; Urartu; The Kingdom of Van and its Art; Frederick A. Praeger Inc., Publishers; Evelyn, Adams & Mackay, Ltd.; New York, Washington, 1967, p. 15.

[2] Տե՛ս նույնը, ինչ վերևում:

[3] Տե՛ս Salvatori Sandro; An Urartian Bronze Strip in a Private Collection; *East and West*, vol. 26, No. 1/2, March - June 1976, p. 97.

[4] Տե՛ս Salvatori Sandro; An Urartian Bronze Strip in a Private Collection; *East and West*, vol. 26, No. 1/2, March - June 1976, p. 98.

[5] Տե՛ս Piliposyan Ashot; An Urartian bronze belt; Studi Micenei ed Egeo-Anatolici, Vol. 37, 1996, p. 124.

[6] Տե՛ս նույնը, ինչ վերևում:

երևույթ՝ գոտու վրա պատկերված 12 վարդազարդից ամեն մեկը իր հերթին բաղկացած է 12 ծաղկաթերթերից՝ ընդհանուրը կազմելով 144 ծաղկաթերթ (12 X 12 = 144): Տվյալ վերլուծության հետևանքով ստացված 144 ծաղկաթերթերի քանակը զարմանալիորեն համապատասխանում է 144 կենդանիների քանակին, իսկ վարդազարդերը, յուրաքանչյուրը բաղկացած 12 ծաղկաթերթերից, իրենց հերթին ամբողջ գոտին բաժանում են 12 տեսարանների[1]: Այսպիսով, մենք ստանում ենք 12 և 144 (12 X 12) **քանակական տարրերի հավասարություն և համամասնություն**, մի ակնհայտ վկայություն, որ ուրարտացի վարպետները գիտակցաբար և կանխամտածված են կիրառել **բաժանիչ, համամասնական և զուգաչափային գործառույթները** Ուրարտական բրոնզե գոտիների հորինվածքներում: Բացի դրանից, տվյալ սկզբունքային նշանակություն ունեցող թվի վերաբերյալ մենք որպես վարկած ընդունում ենք այն ենթադրությունը, որ 12 թիվը կարող էր կապված լինել տարվա 12 ամիսների հետ, այսինքն արտահայտել ուրարտական հնագույն օրացույցի մեկ տարվա ամիսների քանակը վերը նշված Ուրարտական գոտու **հորինվածքային կառուցվածքի տարրերի համամասնական քանակով**:

Ձանազանելով Ուրարտական բրոնզե գոտիների **բուսական և սիմվոլիկ զարդանախշային մոտիվները էսթետիկ-գեղարվեստական, պատկերային-թեմատիկ և իմաստային-գաղափարային սկզբունքները**՝ պետք է նշել, որ **իմաստային-գաղափարային սկզբունքները** տվյալ մակարդակում հանդես են գալիս ամեն մի տարրի առկայությամբ և ինքնուրույնաբար՝ բնութագրելով այն որպես **զարդ, նշան, սիմվոլ կամ խորհրդանիշ**: Միևնույն ժամանակ, երբ նույն տարրը որպես **նախշ** կամ **զարդ** հանդես չի գալիս առանձին, այն կցվում է այլ մակարդակներին՝ պատկերի, նկարի և տեսարանի այլ տարրերի:

Ուրարտական արվեստի ծիսական-կրոնական, սիմվոլիկ տարրերի հիերարխիկ-աստիճանային բնույթի մասին գրել է Ռ. Բառնետը՝ ընդգծելով ուրարտական աստվածությունների հիերարխիայի պատմական բնույթը, որի արգասիքները պատմականորեն ձևավորվել են դեռ նախաուրարտական ժամանակաշրջանում, ուրարտների նախնիների՝ հուրիների կողմից: Ռ. Բառնետը ևս անդրադառնում է ուրարտական կրոնական-ծիսական համակարգի հիերարխիկ-աստիճանային բնույթին, նշելով որ գոյություն ունի անխախտելի կապ **ուրարտական աստվածությունների (գերագույն և գլխավոր աստվածներ, աստվածություններ, երևակայական էակներ)** և **սրբազան նշան-խորհրդանիշների միջև (թևավոր արև-սկավառակ, Կենաց ծառ),** որոնք համատեղ պատկերվում են ուրարտական արվեստի իրերում և հատկապես Ուրարտական բրոնզե գոտիներում[2]:

Ուրարտական բրոնզե գոտիների զարդանախշային միավորների դասակարգված ստույգ տեղեկատվական բազայի ստեղծման խիստ անհրաժեշտությունը օրապահանջ և հրատապ խնդիր է: Վ. Կլեյսը այդ կապակցությամբ նշել է, որ Ուրարտական բրոնզե գոտիների մեծամասնության ծագման վայրի և ժամանակագրային տվյալնե-

[1] Տե՛ս Piliposyan Ashot; An Urartian bronze belt; Studi Micenei ed Egeo-Anatolici, Vol. 37, 1996, p. 124.
[2] Տե՛ս Boardman J.; Edwards S.; Hammond N.; Barnett R.; The Cambridge Ancient History, volume 3, part 1, Cambridge University Press, United Kingdom, 1982, p. 366.

րի ստուգաբանումը գրեթե անհնար է, ինչպես նաև դեռ հարցականի տակ է այն հարցը, թե ովքեր էին այդ գոտիների կրողները՝ տղամարդիկ թե կանայք[1]:

Տվյալ խնդրի լուծման եղանակները ոչ միայն պիտի ընդգրկեն Ուրարտական գոտիների զարդանախշային միավորների տիպաբանական համեմատության և գործառույթային համադրության սկզբունքները այլև տարրերի հետ, այլ ներթափանցելով զննման բուն արմատային պարունակություն՝ պիտի ներառեն այնպիսի պատմահնագիտական մեթոդոլոգիա, որը հնարավոր կդարձնի վերականգնել ուրարտական դիցաբանության կառուցվածքի և կրոնական-ծիսական մտածելակերպի ավանդական եղանակները: Մեր կողմից կատարված նման ընտրությունը ամենևին էլ չի կարելի պատահական համարել, քանի որ այն օրինաչափորեն հենվում է ուրարտական **սրբազան դիցաբանական տարրերի և կենսական կրոնական-ծիսական արժեքների կարգավորված հիերարխիկ-աստիճանային, դասակարգային բնույթի վրա**: Դա նկատել է Կ. Յակուբիակը, ում կարծիքով ուրարտական դիցարանում ամեն մի խոշոր աստվածություն ունի կցված ծառաներ, ենթակա կենդանիներ և հովանավորվող նշան-սիմվոլներ[2]:

Տվյալ բացատրությունը ոչ մի կերպ չի կարելի պատահական համարել, ընդհակառակը պիտի դիտարկել օրինաչափորեն ձևաբանված եղանակով, քանի որ այն ուղղակիորեն պայմանավորված է մեր տվյալ հետազոտության համար մի կարևորագույն հանգամանքով. մենք հստակ կարող ենք բնորոշել բարդ սիմվոլների իմաստաբանությունը, քանի որ տվյալ զարդանշանային տարրերը ոչ միայն բնորոշ են Ուրարտուի մշակույթին, այլև հանդիպում են բուն Ուրարտական պետությանը անմիջականորեն հարևան Մերձավոր Արևելքի և Փոքր Ասիայի խոշոր և ազդեցիկ քաղաքակրթություններում՝ Աշշուրում, Բաբելոնում, Հիթիթական կայսրությունում, Մարաստանում, Էլամում և այլուր: Ուրարտական բրոնզե գոտիներում գոյություն ունեն որոշ կարևոր **նշան-սիմվոլներ**, որոնց կենսական և սխրական նշանակությունը լավագույն ձևով հաստատված է եղել Ուրարտույում և դրան հարակից պետություններում: Կ. Յակուբիակը բերում է Գերմանիայի Կարլսռուհե քաղաքի թանգարանում պահպանվող Ուրարտական գոտու օրինակը, որտեղ պատկերային մի տեսարանում ներդաշնակորեն առկա են աստվածություններ, առյուծներ և վարդազարդեր, որոնք ունենալով տարբեր հիերարխիկ դիրքային աստիճաններ՝ այնուամենայնիվ կազմում են մեկ անխախտելի ամբողջություն[3]:

Ամփոփելով բազմաթիվ ականավոր ու բանիմաց հնագետների, պատմաբանների և ուրարտագետների ուսումնասիրությունները Ուրարտական բրոնզե գոտիների և, մանավանդ, դրանցում տեղ գտած զարդամոտիվների վերաբերյալ՝ մենք կարող ենք գալ որոշակի նախնական եզրակացության: Տվյալ գիտական բնութագրումը իր մեջ ներառում է Ուրարտական բրոնզե գոտիների զարդամոտիվների ձևաբանումը մեր որպես **հարդարանքային բաղկացուցիչ տարրերի կամ հորինվածքային բաղադրիչ էլեմենտների**, որոնք ունեն ստույգ արտահայտված ֆունկցիոնալ-առումային եղա-

---

[1] Տե՛ս Kleiss Wolfram; Observations on Urartian Bronze Belts, in Yeki bud, yeki nabud, Essays on the Archaeology of Iran in honor of William Sumner, Los Angeles, 2003, p. 217.

[2] Տե՛ս Yakubiak K.; Some Remarks on Fantastic Creatures in Urartian Art and their Religious Aspects; Acta Archaeologica Pultuskiensia, volume III, Pultusks 2011, p. 78.

[3] Տե՛ս Yakubiak K.; New Aspects of God Tesheba's Iconography; Altorientalische Forschungen, issue 31, 2004, p. 89.

նակներ, որտեղ ամեն մի զարդանախշային տարր ներբեռնում ու պարունակում է իր մեջ այս կամ այն նշանակությունը: Որպես Ուրարտական **կրոնական աշխարհայացքի, ծիսական պատկերացումների և մյութոսաբանական սիմվոլիզմի** ամենակարևոր արտահայտություններ, այդ տարրերը կրում են ստույգ **հիերարխիկ-աստիճանային դասակարգային բնույթ**՝ Ուրարտական սրբազան դիցաբանական տարրերի և կրոնական-ծիսական կենսական արժեքների դասման, կարգավորման և պաշտամունքային կարևորության աստիճանների համաձայն: Իրենց սիմվոլիկ իմաստաբանության կիրառումներով զարդանախշային մոտիվները որպես **հարդարանքային բաղկացուցիչ տարրեր կամ հորինվածքային բաղադրիչ էլեմենտներ** ստեղծում են Ուրարտական բրոնզե գոտիների ուրույն և անկրկնելի թեմատիկան, զարգացնում են դիցաբանական կոնտեքստը, ձևավորում են անկրկնելի կրոնական-ծիսական աշխարհայացքը իր վառ արտահայտված արվեստաբանական էսթետիկ-գեղարվեստական հատկանիշներով, հետաքրքրական պատկերային-թեմատիկ արտացոլումներով և ավանդականորեն մշակված իմաստային-գաղափարային սկզբունքներով:

Այսպիսով, բնութագրելով, ձևաբանելով և դասակարգելով Ուրարտական բրոնզե գոտիների զարդանախշային մոտիվները ըստ **որակային կերպերի կամ բնութագրային առումների**՝ մենք զատեցինք դրանց հետևյալ հիմնական տարբերակները՝ **ա) նախշ – երկրաչափական գծավորում, բ) զարդ – երկրաչափական մարմին; գ) բույս կամ բուսական մոտիվ, դ) նշան կամ նշանակային միավոր, ե) տիեզերական սիմվոլ, զ) սուրբ խորհրդանիշ:** Ուրարտական բրոնզե գոտիների պատկերային համակարգի զարդանախշային մոտիվների վերոնշյալ կատեգորիաներից յուրաքանչյուրը դասակարգվում, զանազանվում և արտաբերվում է համաձայն դրանց **էսթետիկ-գեղարվեստական, պատկերային-թեմատիկ և իմաստային-գաղափարական ներհատուկ իմաստաբանության**, մի պրոցես, որը թույլ է տալիս բնութագրել ցանկացած զարդանախշային միավոր՝ դրանց ստուգաբանված, օրինաչափ և յուրօրինակ հատկանիշների համաձայն: Գիտականորեն մշակվող և կառուցողական վերլուծաբանությամբ կիրառվող մեթոդական սկզբունքները անչափ կարևոր են ինչպես Ուրարտական բրոնզե գոտիների կամ դրանց բեկորային բաղադրամասերի իմաստային-պատկերային միավորների մանրակրկիտ ուսումնասիրության համար, այնպես էլ Ուրարտական պատկերագրության **արվեստաբանական-դիցաբանական թեմատիկայի և մյութոսաբանական գաղափարային-սիմվոլային արժեքների** շտեմարանի հարստացման առումով:

Նկարներ

Նկար 1. Արևի կամ աստղերի (երկնային մարմինների) պաշտամունքային բրոնզե թիթեղ: Ուրարտական բրոնզե գոտու ֆրագմենտ:

Աղբյուր. Batmaz Atilla; Votive Objects and Their Storage Areas in Urartian Fortresses; Ancient Near Eastern Studies, issue 52, 2015, page 198, figure 29.



Նկար 2. Մի այլ արևի կամ աստղերի (երկնային մարմինների) պաշտամունքային բրոնզե թիթեղ: Ուրարտական բրոնզե գոտու ֆրագմենտ:

Աղբյուր. Batmaz Atilla; Votive Objects and Their Storage Areas in Urartian Fortresses; Ancient Near Eastern Studies, issue 52, 2015, page 198, figure 29a.



Նկար 3. Ուրարտական պատկերագրության մեջ օգտագործված Թևավոր Արև-սկավառակում գտնվող Շիվինի Արև աստծո պատկեր:

Աղբյուր. Kendall Timothy; Urartian Art in Boston: Two Bronze Belts and a Mirror; *Boston Museum Bulletin,* vol. 75, 1977, page 47, figure 14b.

Նկար 4. Սրբազան Թևավոր Արև-սկավառակի պատկերը բրոնզե գոտու վրա:

Աղբյուր. Kadar Istvan; Urartu emlékek memorabilia; Püski Kiadó Kft., Budapest, 1996, page 63, figure 46.

Նկար 5. Սրբազան Թևավոր Արև-սկավառակի խորհրդանիշը բրոնզե գոտու վրա:

Աղբյուր. Bonacossi Daniele Morandi; Una cintura di bronzo Urartea nel Monastero della Congregazione Mechitarista Armena dell'isola di San Lazarro – Venezia; Studi Micenei ed Egeo-Anatolici, Vol. 35, 1995, page 144, figure b.



Նկար 6. Զարդամոտիվներով և Կենաց ծառի խորհրդանիշ ունեցող Ուրարտական բրոնզե գոտու ֆրագմենտ:

Աղբյուր. Loon van Maurits Nanning; Urartian Art – Its Distinctive Traits in the Light of New Excavations; Istanbul, Nederlands Historisch-Archaeologisch Instituut, 1966, page 122, figure 14ad.

Саак Таронци, Символическая осмысленность орнаментально-украшательских мотивов Урартских бронзовых поясов, – Непосредственная тема статьи является детальное описание орнаментально-украшательских мотивов Урартских бронзовых поясов, их своеобразных функций в системе художественных концепций Урартской иконографии, и то специальное символическое осмысление, которое гармонично представляет эстетическо-художественные особенности, изобразительно-тематические отражения и смысловые-идейные принципы этих орнаментально-украшательских элементов. В статье представляются роль и значение орнаментально-украшательских мотивов Урартских бронзовых поясов как их важных композиционных компонентов и составных элементов дизайна, а также их специфический символизм в мифологическом контексте религиозно-обрядной системы урартского веровательного мировоззрения.

Saak Tarontsi, Symbolic meaningfulness of ornamental-Decorational Motives of Urartian Bronze Belts, – The article presents a detailed description of ornamental-decorational motives of Urartian bronze belts, their peculiar functions in the system of artistic concepts of Urartian iconography, and that specific symbolic comprehension, which harmonically represents aesthetic and artistic features, figurative-thematic reflections and notional-ideological principles of those ornamental-decorational elements. In the article the role and significance of ornamental-decorational motives of Urartian bronze belts are presented, as their important composite components and constituent elements of design, as well as their specific symbolism in the mythological context of religious-ritual system of Urartian world-view of beliefs.

Սաակ Տարոնցի – Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի հնագիտության և ազգագրության ամբիոնի ասպիրանտ: 2005 թ.-ին ավարտել է ԱՄՆ-ի «Ալլայանթ Ինտերնեյշնալ Յունիվերսիթի» համալսարանի պատմության և լեզվի բաժինը: